

ԱՆՏՈՆԻՈՒ Ի ՌՈՒԻՍ ՄԱԶԱԴՈՅԻ ՔՆԱՐԵՐԳՈՒԹՅՈՒՆԸ

Զնայած բազում քաղաքական խլրտումներին և սոցիալական բախումներին, որոնք առկա էին Իսպանիայի թատերաբեմում 20-րդ դարի առաջին կեսին, մշակութային աշխարհին ակամատես եղավ մի վերածննդի, որն ստիպեց որոշ գրաքննադատների խոսել այն ոսկե դարի մասին, որն սկսում է 1898-ին և վերջանում 1936-ին ծագած քաղաքացիական պատերազմով:¹

Այս շրջանում ի հայտ եկան մի շարք գրողներ, որոնք հայտնի դարձան 98-ականներ անվամբ: Այս սերունդը, որի նպատակն էր վերաստեղծել Իսպանիան, նորամուտություններ կատարեց ինչպես գրականության, այնպես էլ արվեստի այլ բնագավառներում:

Խուսափելով 19-րդ դարի իսպանական գրականությանը բնորոշ հռետորական բնույթից՝ 98-ականի սերունդը, ձգտելով մտքի խորության և պարզության, հավանություն է տալիս գրականության ավելի լակոնիկ ձևերին՝ սոնետներին, եռատողերին և պիեսներին:

Այս շրջանի որոշ անհատներ ձեռք բերեցին համաշխարհային համբավ, դրանցից էին ազգությամբ քասկ Սիգել դե Ունամունոն, Պիո Բարրոխան, որոնք ցնցեցին աշխարհը: Վալենսիացի Ասորիը հանդես եկավ իր տպավորիչ զգացմունքայնությամբ: Ումոն Սարիա դել Վալյե Ինկլանը երաժշտականություն հաղորդեց իսպանական պոեզիային: Անդալուզի Անտոնիո ի Ռուիս Մաչադոն եղավ ժամանակակից իսպանական պոեզիայի հիմնադիրը:

Անտոնիո ի Ռուիս Մաչադոն ծնվել է 1875-ին, Սևիլիայում: Ուսումն ստացել է Մադրիդի համալսարաններից մեկում: 1903-ին լույս է ընծայում բանաստեղծությունների առաջին ժողովածուն՝ "Մեներուններ" ("Soledades") խորագրով և դրանով իսկ կայանում որպես բանաստեղծ: Վերջինս մոդեռնիզմի

¹ Այս շրջանում եղել է երկու սերունդ՝ 1898-ականներ և 1927-ականներ:

մի յուրօրինակ դրսևորում է, որի թեմատիկան պատվում է Աստծո, ժամանակի և Մահվան առանցքով: "Մեմուարյուններում" ակնառու է Մաչադոյի պոեզիայի ինքնատիպությունը: Նրա ամեն մի բառը պատկեր է, ուր ինքը և պոետական թեման կապված են այլ պատկերների հետ: Օրինակ պատկեր է դառնում հին պոետական երևույթը՝ շատրվանը: Շատրվանի պատկերը անցնում է ողջ ժողովածուով՝ իր մեջ ներառելով այլ պատկերներ: Այս առումով ժողովածուի բանաստեղծություններից հատկանշական է «Լույսը»: Այն աչքի է ընկնում երկու երևույթների համեմատությամբ՝ մտացածին երազը և իրական՝ լույսը: Ցերեկային Լույսն ստիպում է բանաստեղծի «կուռքերին, որ նրան երազ են պարզևում», ցրվել, բայց երազին ոչինչ չի կարող փոխարինել: Բանաստեղծական իրականությունն իր մեջ կրում է երազը, պատրանքը: Միայն այս բանաստեղծության մեջ է, որ լույսը ներկայացվում է որպես հակադրություն երազին: Հետագայում այս երևույթը վերամշակվում է, վերափոխատավորվում: Ժողովածուի մեջ ընթերցողը կարող է հանդիպել իրար հակասող այնպիսի սկզբունքներ, ինչպիսիք են բարին և չարը, տխրությունը և ուրախությունը, լույսը և խավարը:

Մաչադոյի բանաստեղծությունների մեջ տեղ է գտել դարի հասարակության պայքարը, որտեղ նա ի հայտ է բերում պոետի նշանակությունը, բայց այդ հասկանալու համար անհրաժեշտ է ևս մեկ անգամ անդրադառնալ երազին, քնին:² Այս թեման արծարծվում է Մաչադոյի ողջ գործունեության ընթացքում իր տարբեր շրջաններում դրսևորվելով նոր ձևերով:

30-ականներին հիշելով այս շրջանը, մտքերն ու զգացումները, որ տիրում էին նրան, Մաչադոն գրում է. «Միայն այն պահին երբ պոետին տիրում է թմբիրը, նա կարող է տրվել երազների բացահայտմանը և գտնել դրանց մեջ տարրեր իր բանաստեղծությունների համար: Օճեփոսկոպիան (երազատեսություն) ցայսօր չի ստեղծել նշանակալի որևէ բան: Աթափ վիճակում գրված բանաստեղծությունները, նույնիսկ պակաս հաջողվածները, ավելի ինքնատիպ և գեղեցիկ են, մերթ ընդ մերթ ավելի անհմաստ, քան մեր երազները: Սա ձեզ

² Sueño բառը իսպաներում նշանակում է և՛ քուն, և՛ երազ: Մաչադոն այն օգտագործում է երկու իմաստով:

ասում է նա, ով իր կյանքի շատ տարիներ անց է կացրել մտորումների մեջ փորձելով համոզվել հակառակի մեջ»:³

Սա է Մաչադոյի քննադատությունը. միայն պոետը գիտե՝ ինչ ասել է ընդմիջտ:

Այս շրջանում Մաչադոյի գեղագիտության համար երազը քիչ դեր չի խաղացել: Երազը ստեղծագործական պատրանք է՝ ստեղծված բանաստեղծի կողմից. ահա և բարձրագույն իրականությունը, որ կարող է տալ միայն ինքը:

Մաչադոյի վաղ պոեզիայի մեջ բնապատկերի ներառումը հանդիսանում է բազմիմաստության ձեռք բերման հիմնական միջոցներից մեկը: Բնապատկերը և նրա ձեռք բերման երկրորդական տարրը՝ ժամանակը, հանդես են գալիս, ասես, մշտական թեզի կարգով, բանաստեղծությունների մեծ մասում, որի անտիթեզն է մարդկային հոգին, և նրանց բախումն է ստեղծում բանաստեղծական իրողություն, մարդկային ապրումների ճշմարտություն և գեղեցկություն:

Ահա բազում օրինակներից մեկը՝ «Երեկոն կիպարիսի անտառի վրա»:
Կիպարիսի անտառի վրա աղջամուղջն է իջնում: Շատրվան՝ դանթող էրոսով:
Մարմարե գավաթը լի է անշարժ ջրով: Ահա և ողջ բանաստեղծությունը: Բայց ի՞նչն է, որ հուզում է մարդու սիրտը: Ամենայն հավանականությամբ մարդկային ապրումների գեղեցկությունը, որ իր արտացոլումն է գտել հեռացող նկարագրության մեջ: Վերջինս իր հերթին ակնարկ է հեռացող կյանքի: Ահա դրա ապացույցը. անկենդան իրերի կերպարների դերում «քարե էրոսը լռելյայն դանթում է, կանգնել է մահացած ջուրը»: Բայց հենց դրանք են ստիպում «ապրել» այս բանաստեղծությանը, տալիս յուրահատուկ բանաստեղծական համոզմունք: Նշված զուգահեռը լուծվում է ավելի ընդլայնված պլանով. թեզը բնապատկերն է, բնությունը: անտիթեզը՝ մարդկային հոգու կյանքը:

Մաչադոյի առաջին ժողովածուն հրատարակվել է երկու անգամ: Երկրորդ, ավելի ծավալուն ժողովածուի մեջ ("Մեմուրյուններ, Սրահներ և այլ բանաստեղծություններ" "Soledades, Galerías y otros poemas" 1907) հանդես է գալիս մեկ այլ թեմա՝ մահը: Իհարկե համայն մարդկությանը միշտ էլ մտահոգել

³ Այս և հետևյալ մեջբերումները արված են Григорьев В. П. "Антонио Мачадо" գրքից, Մ. 1975թ:

է, թե ի՞նչ է կյանքը, ինչու՞ է ապրում մարդը, ի՞նչ է իրենից ներկայացնում մահը ևն; այս ամենը եղել է ուշադրության կենտրոնում և արտացոլվել պոեզիայում: Սակայն հասարակական մտքերի ազդեցությամբ, որ հուզում էին Իսպանիան դարի սկզբին, հետաքրքրությունը այս թեմաների համդեպ ավելի հախուռն էր: Ունամունոյի համար մահվան հարցը գոյության արմատական հարցն է: Մահվան մտքից են ծնվել փիլիսոփայությունը և պոեզիան: Կյանքն ընկալվում է մահվամբ: Ստորումներն այն մասին, թե ի՞նչ է կանգնած մահվան ետևում, հանգեցնում էին այն բանին, որ կոչվում է բարձրագույն կարգ, օրենք, այն է՝ Աստված: Ահա այստեղից էլ կյանքը որպես ժամանակավոր գոյության ձև, հանգում էր եռամիասնությանը. «Ահ, Մահ, Աստված»:

Մաչադոյի բանաստեղծությունների մեջ մահվան հարցը լուծվում է այլ պլանով: Մահն անխուսափելի է, բայց այն չէ, որ որոշում է մեր կյանքը: Մարդ տանջվում է, քանզի չգիտի՝ ինչպես ապրել: Այս է, որ նրան հուսահատեցնում է: Բանաստեղծի մոտ այս հուսահատությունը վեր է ածվում հույսի, մղում է ինչպես դեպի անցյալ, այնպես էլ՝ դեպի ապագա: Ինչ վերաբերում է մահվանը, այն անխուսափելի է, և բանաստեղծը հանգիստ է. «ոչ ոք չի խուսափի վերջին հանդիպումից»:

Մահվան վերաբերյալ որպես արդյունք Մաչադոյի մտորումները հանդես են գալիս «Ընկերոջ հուղարկավորությունը» բանաստեղծության մեջ: Այն սկսում է շատ պարզ. «Նրան հանձնեցին հողին»: Առանց առաջաբանի, քանզի հուղարկավորությունը դեռևս մահ չէ: Հիմա նրան կթաղեն, և մի քանի ակնթարթ հետո նա կանհետանա և այլևս չի վերադառնա: Բանաստեղծի ապրումների վերաբերյալ «ակնառու» է միայն մեկ հատված. «Մի դաժան օր նրան հանձնեցին հողին»: Հետաքրքրությունը հրավիրված է ոչ թե մանրամասներին, դրանք տրված են շատ կցկտուր, այլ անձնական վերապրումների բացահայտմանը: Սակայն ընթերցողն այստեղ ուղղակիորեն չի կարող հետևել Մաչադոյին, քանզի նա լիովին տեղեկացված չէ իրողությանը: Անհետանալ, մահանալ, մի՞թե սարսափելի չէ: Բայց շուրջն ամեն ինչ հանգիստ է. ջինջ, կապույտ երկինք, գարնանային արև: Բնության այս վիճակը հանգստացնում է ընդվզած հոգին, վախը, սարսափը: Տեղի է ունեցել սովորական, լուրջ մի երևույթ, բայց ոչ սարսափելի: Այդ իսկ պատճառով էլ

ավելորդ բառեր հարկավոր չեն: Մահվան պրոբլեմ չի առաջանում, մահը կյանքի պահն է:

Եվ լիովին պատում է երազը՝ պարզ ու իրական:⁴

«Երազ» բառն այնքան բնորոշ է Մաչադոյի պոեզիայի այս շրջանին, որ միացնում է այս երկու երևույթները՝ կյանքը և մահը:

Մաչադոյի հույզերը խորապես կապված են կաստիլիական դաշտերի տարածությունների հետ, որտեղ ազգային խլրտումները, փիլիսոփայությունը և բարոյախոսությունը զուգահեռվում են կաստիլիական բնության հետ: Ինչպես նա ինքն է ասել. «Թափանցել եք հոգուս մեջ, կամ միզուցե արդեն նրա խորունկ անկյուններու՞մ էիք...»:

Իսպանական իրականության պատկերավորմանը կից հայտնվում են Սորիայի բնապատկերները և բնակիչները:

Բնապատկերը հայտնվում է «օբյեկտիվորեն», բայց հետզհետե ձեռք է բերում համընդհանրություն հեղինակի մտորումների և բնապատկերի միջև: Մաչադոն «գծագրում» է իր զգացմունքները՝ ելնելով կաստիլիական դաշտերից: Իր ոճը «Կաստիլիայի դաշտերում» անցել է զտման ճանապարհով՝ չզերծվելով հղկման մոդեռնիստական գծերից, տոնն այստեղ խիստ է և պիրկ: Բանաստեղծական ձևը նրա մոտ այնքան ճշգրիտ է կազմված, որ գրեթե չի զգացվում: Նրա բանաստեղծություններից շատերը կարծես լուսավորվում են միջից՝ նուրբ, խորհրդավոր լույսով և լի են այն յուրահատուկ մեղեդայնությամբ, որը հեռու չէ բովանդակությունից: Նրա ռիթմում զգացվում է չշտապող մարդու քայլվածքը՝ խորասուզված մտքերի մեջ, որ մերթ րնդ մերթ կանգ է առնում, որպեսզի ուշադիր և վսեմ հայացք գցի իրեն շրջապատող իրականությանը, որ սփռված է շուրջը: Նրա ստեղծագործությունների մեջ գերիշխում է երազի կերպարը, որը նա ներկայացնում է որպես միաձուլյ մի ձև, համակերպվող դրական իրականություններին, որ վերապրեցնում է անցյալի զգացմունքները և փորձը, որ լուսավորում է ներկան և ուղի հարթում դեպի ապագան:

Նոր ժողովածուի վերնագիրը «Կաստիլիայի դաշտեր» ("Campos de

⁴ Այս և հաջորդ մեջբերումներն արված են Լազարո Բուսոնի «Իսպաներեն գրականության քրիստոմատիա» գրքից, Մադրիդ, 1988թ:

Castilla" 1912-1917), ինչ-որ չափով խոսում է բովանդակության մասին: Պաշտ,⁵ այն շատ մոտ է Մաչադոյի պոեզիային: Պաշտը զուգահեռվում է որպես «հարազատ հող» (հարազատ Անդալուզիայի դաշտերը, սորիական հողը ևն): Իսկ, ահա, Մաչադոյի պոեզիայի մեջ «դաշտը» բնապատկերի և բնության սիմվոլն է: Բացի այդ դաշտը հասկացվում է նաև որպես «գյուղ»: Վերջինս էլ եռամիասնության բաղկացուցիչ տարրն է, որ կազմում է Իսպանիայի հոգին 98-ականների Ունամունոյի, Ասորինի և այլոց մոտ:

Վերնագրի առաջին բառը «Կաստիլիա», նույնպես լի է իմաստով: Եթե Անդալուզիան լի է մանկության հուշերով, ապա Կաստիլիան պոետի պատանեկությունն է՝ «Պատանեկությունն քսան տարի Կաստիլիայում»: Բացի այդ Կաստիլիան հայրենիք է հանդիսանում ամեն մի իսպանացու համար, անկախ նրանից, թե որ նահանգից է նա: Ունամունոն և Ասորինը Կաստիլիան համարում էին նաև Իսպանիայի անցյալի խորհրդանիշ: Պետք էր ստեղծել նոր խորհրդանիշ – Կաստիլիա:

«Ալվարգոնսալեսի հողը» պոեմը, որ ներառնված է այս ժողովածուի մեջ, հանդես է գալիս որպես Իսպանիայի գյուղացիների վերաբերյալ Մաչադոյի մտորումների բանաստեղծական հանգուցալուծում: Նրա նամակագրության մեջ նախքան պոեմի հայտնվելը կարդում ենք. «Այս անբերրի հողերից Իսպանիայի գյուղացիները ստիպված են տարագրվել, որպեսզի կարողանան «ազատ» վաստակել մի կտոր հաց Ամերիկայի և Աֆրիկայի ողբերգական պայմաններում: Սա այն տեղն է, որտեղ ժողովուրդը տքնում է լիովին գտնվելով եկեղեցու ազդեցության տակ, որտեղ ոչ ոք չգիտի ինչ ասել է մտածել: Իսկ մնացյալում գյուղացին տքնաջան աշխատում է և հլու-հնազանդ տանջվում, կամ տարագրվում է: Այսինքն ապրում է այնպիսի պայմաններում, որոնք հավասարագոր են ինքնասպանության»:

Ինքնասպանությունը հարցի միակ լուծումն է անհող գյուղացու համար, որ թաթախված է ոճրագործության մեջ: Եվ Մաչադոյի համար սա ոչ միայն կյանքի ճշմարտությունն է, այլև բանաստեղծական իրականություն: Ճիշտ

⁵ Իսպաներենում campo նշանակում է և՛ գյուղ, և՛ դաշտ:

այսպես է ավարտվում պոեմի գլխավոր հերոսների կյանքը, որոնք ականա ոճրագործներ են՝ գյուղացիներ:

Պոեմի բովանդակությունը հետևյալն է: Հարուստ գյուղացի Ալվարգոնսալեսը ունենում է երեք որդի: Երբ նրանք մեծանում են, Ալվարգոնսալեսը նրանց մեջ բաժանում է սեփականությունը: Ավագն ստանում է նախիրը, երկրորդը՝ կալվածքը, իսկ կրտսեր որդին չի ստանում ոչինչ, նա պետք է քահանա դառնա: Նման բաժանումը հետևում է հետևյալ գաղափարին՝ պահպանել ընտանեկան հարստությունը՝ հողը մեկի ձեռքում: Բայց կյանքը խափանում է Ալվարգոնսալեսի հաշվարկները: Կրտսեր որդին թողնում է ուսումնարանը և հեռանում է Ամերիկա՝ բախտ որոնելու: Ավագ եղբայրներն ամուսնանում են, և ժառանգության վերաբերյալ ծագում են վեճեր: Եղբայրներն սպանում են իրենց հորը և դին նետում Սև բացատում: Հաջորդ տարվա ընթացքում հայրասպան որդիների հողը բերք չի տալիս՝ վրեժխնդիր լինելով իրենց կատարած ոճրագործության համար: Հյուսիս և իրենց կատարածի համար խղճի խայթ զգալով՝ նրանք նստած են տանը: Այսպես է նրանց գտնում Միգելը՝ կրտսեր որդին՝ վերադառնալով Ամերիկայից: Նա եղբայրներից հող է գնում և սկսում մշակել: Հողը վարձատրում է նրա աշխատանքը, իսկ եղբայրների աշխատանքը զուր է: Այնտեղ մոլախոտից բացի ոչինչ չի աճում:

Աշնանային մի օր, երբ ավագ եղբայրները աշխատում էին, նրանց առջև հանում է սպանված հոր ուրվականը: Սարսափի մեջ նրանք փախչում են անտառ և իրենց վախճանն են գտնում նույն Սև բացատում:

Պոեմը բաղկացած է 41 ռոմանսից: Ստեղծագործության բանաստեղծական լուծումը հենվում է ժողովրդական ռոմանսի փորձի վրա:

Պոեմի բանահյուսական հիմքը և Մաչադոյի մտավոր-գեղագիտական հայացքները որոշ չափով ազդել են պոեմի հերոսների վրա, ստեղծել նրանց անզուգական պատկերը:

Գործող անձանց հետ զուգահեռ հանդես է գալիս մեկ այլ կերպար ևս՝ Կաստիլիայի դաշտերը, նրա բնությունը, իսկ դրանց հետ նաև հայրենիքով տառապող պոետի կերպարը:

Իր պոեմը բխեցնելով ազգային ստեղծագործությունից. «Իմ ռոմանսները հանդիսանում են ժողովրդի ստեղծագործությունը, այն հողում, ուր երգվել են», Մաչադոն ջանում է ընդգծել, որ իրեն «հաջողվել է արտահայտել ժողովրդի զգացումները լավագույնս, քան որևէ ոք»:

Պոեմի գլխավոր գծերից հանդես են գալիս հետևյալները՝ «հող-ոճրագործություն», «ոճրագործություն-քավություն» և վերջապես «ոճրագործություն-հատուցում»:

Այս շրջանի Մաչադոյի ստեղծագործություններին հատուկ են հասարակական երևույթների գեղագիտական քննադատությունը, պատմվում է ոչ թե հանցագործը, այլ հանցագործությունը: Բանաստեղծը հավատում է միայն արքայազն արդարությանը՝ անկախ կոնկրետ իրագործողներից:

Այսպիսով «Կաստիլիայի դաշտերը» ժողովածուի ի հայտ գալը՝ տվյալ դարի իսպանական պոեզիայում կարելի է գնահատել որպես ռեալիստական ուղղությունների հավաստի հաղթանակ իսպանական պոեզիայի մեջ 20-րդ դարում: Բանաստեղծական վարպետությունը, նուրբ քնարերգությունը, քաղաքացիական իրական պաթոսը և Մաչադոյի հայրենասիրությունը թույլ տվեցին ժողովածուին տանել ժամանակի փորձությունը: «Կաստիլիայի դաշտերը» ցայսօր իսպանական պոեզիայի եզակի նմուշներից են:

20-ական թվականներին, երբ լույս տեսան «Նոր Տաղերը», իսպանական արվեստի մեջ բնորոշվում են որպես դժվար տարիներ: Եվ ոչ միայն այն պատճառով, որ երկրում տիրում էր հակազդեցություն, այլև անասելի չափերով աճում էր Պրիմո դե Ռիվերայի⁶ ռեժիմը, որն ստիպում էր ոմանց թողնել երկիրը, իսկ մյուսներին՝ հեռանալ ակտիվ գործունեությունից:

«Նոր Տաղերը» տալիս են այլ մոտեցում հին թեմային: Բանաստեղծ

⁶ Պրիմո դե Ռիվերա (Primo de Rivera) Մարկիզ դե Եստեյա Միգել (1870-1930) իսպ. պետ. գործիչ, գեներալ: 1915-17-ին Կադիսի զինվ. նահանգապետն էր, այնուհետև՝ Կալենսիայի, Մադրիդի, Կատալոնիայի գեներալ-կապիտանը (զինվ. օկրուգի հրամանատար): 1923-ի սեպտեմբերին կատարել է պետական հեղաշրջում, գլխավորել կառավարությունը (զինվ. դիկտատուրա), դարձել Իսպանիայի փաստական դիկտատոր: 1925-ի Պ. դե Ռ. զինվ. դիկտատորիան փոխարինել է քաղաքացիական վարչությամբ և դարձել նրա նախագահը: 1930-ի հունվարի տևող ճգնաժամի և հեղափոխական շարժման ուժեղացման պայմաններում հարկադրված հրաժարական է տվել և տարագրվել:

Հայկ. Սով. Հանրագիտարան, հատ. 9, էջ 429

արդեն ծեր է: Կյանքը նրան չի շնորհել ուրախություն: Ճշմարտության մշտնջենական փնտրտուքը ստիպել է նրան ընտրել տարբեր ճանապարհներ: Սակայն նա հավատարիմ է մնացել իր իդեալներին, նրա հոգին կորույի է, սիրտը՝ երիտասարդ:

«Նոր Տաղեր»-ում արծարծվող խնդիրները եապես փոխեցին Սաչադոյի պոեզիան: Այն կենտրոնացված է երեք շարքերում՝ «Նոթեր», «Ասույթներ և տաղեր» և «Նոթատետրից», վերջինների թեմատիկան նույն մտորումներն են՝ ինչպես հասնել կյանքի և մահվան խնդրի, արվեստի, էթիկայի ճշմարտությանը: Բանաստեղծի ստեղծագործությունը մեր առջև բացում է որոշ ճանապարհներ: Սաչադոն հավատում է, որ ճշմարտությունը (ոչ քունը, ոչ իմը, այլ բոլորինը) կգտնվի, և կոչում է դրա որոնմանը:

Քո ճշմարտությունը, ոչ, պարզապես ճշմարտությունը,

Շտապիր ինձ հետ այն գտնելու,

Քոնը պահիր քեզ համար:

«Նոր Տաղեր»ի եռատողերը տարբերվում են առաջին հերթին իրենց պոզիտիվությամբ: Նրանք խորհուրդ են տալիս, ուղղություն, սովորեցնում են.

Նկատի ունեցեք,

Միայնակ սիրտը

Իրական սիրտ չէ:

Քանզի մենության մեջ մարդ ոչ միայն թույլ է, այլև՝ անուժ գտնելու ճշմարտությունը:

Իմ մենության մեջ ես տեսել եմ ամեն ինչ պայծառ լույսի մեջ,

Բայց այն ճշմարտության պայծառություն չէր:

Այստեղ կա հաճախակի կրկնվող միտք՝ մարդը կախված է մյուսներից, նրանք՝ մյուսները, թույլ են տալիս մարդուն համարել իրեն մարդ:

Աչքը, որ տեսնում ես,

Ոչ թե աչք է, որ տեսնում ես,

Այլ, որ տեսնում է քեզ:

Իսպանացի քննադատներ Բարբադոն, Բարսիան և այլոք տեսնում են այստեղ պոզիտիվիստական փիլիսոփայության ազդեցություն, չնայած նույն հաջողությամբ այն կարելի է վերագրել մատերիալիստական փիլիսո-

փայլությամբ: Նման բանաստեղծությունները կարելի է դիտել որպես փորձ Մաչադոյի կողմից իմաստավորելու մարդու տեղը հասարակության մեջ:

Պայքարը նոր արվեստի ձեռքբերման համար, այն իդեալների, որոնք Մաչադոն համարում էր առաջնային, ետին պլան էին մղում մնացյալ ամեն ինչ: Դրան աջակցում էր և ընդամուր ռեակցիան, որ տիրում էր այդ ժամանակ երկրում, երբ լռեցին ազատասիրական երգերը, իսկ դիմադրողներին ձերբակալում էին կամ արտաքսում երկրից: Արտաքսվողների շարքերում էին նաև Մաչադոյի ընկերներից շատերը, այդ թվում նաև նրա հոգևոր ուսուցիչ Ունամունոն: Այդ ծանր տարիներին Մաչադոն վստահ «հին» արվեստի ունայնության մեջ, նոր հասարակության հետ պայքարում, մտածեց ստեղծել «նոր» արվեստ, որը կլիներ ավելի հզոր, քան հինը էր: Եվ նա խիզախեց «Նոր Տաղերի» ստեղծումը, որը չհասկացան նրա քննադատները, քանզի բանաստեղծն իրավունք չունի կասկածել, որ պոետի տիեզերական կենտրոնը իր սեփական սրտում է, որ իր հոգին լուսատու բանաստեղծական էներգիա սովող ծփող շատրվան է՝ ունակ նույն պահին ստեղծել կամ ոչնչացնել:

Հետպատերազմյան շրջանում Մաչադոն վեր է ածվում քաղաքական բանաստեղծ գործչի՝ Իսպանիային նվիրված իր ինքնագոհությամբ և բանաստեղծություններով:

Անցել է մի քանի տասնամյակ այն պահից ի վեր, երբ Մաչադոն գրել է իր վերջին տողը: Մահից մի քանի որ անց խոսեց Մաչադոն եղբոր տաբատի գրպանում գտավ ճմրթված թղթի մի կտոր, որի վրա բանաստեղծը գրել էր երեք նշում այն մատիտով, որ խնդրել էր օրեր առաջ: Առաջինը Համլետի մենախոսությունն էր. "Լինե՞լ, թե՞ չլինե՞լ", երկրորդը՝ մեկ տող. "Այս կապույտ օրերը և մանկության արևը", երրորդը Գիոմարին նվիրված բանաստեղծությունն էր:

Եվ Մաչադոյի անունը շարունակում է հնչել պարզ և ուժեղ: Նրա պոեզիան շարունակում է տեղ գրավել համաշխարհային գրականության արժեքների շարքում, իսկ նրա հեղինակությունն օրեցօր աճում է: Դրա վառ ասպարույցն է նրա գործերի հրատարակությունների աճը, ինչպես նաև թարգմանությունները այլևայլ լեզուներով: Ցավոք, հարկ է նշել, որ հայ

ընթերցողին քիչ է ծանոթ Անտոնիո Մաչադոյի քնարերգությունը, սակայն հուսով ենք, որ այս հոդվածը փոքր ինչ կլրացնի այդ բացը:

1956թ. Նոբելյան մրցանակի կոմիտեն, մրցանակ շնորհելով Խուան Ռամոն Խիմենեսին, նշեց, որ բանաստեղծն այն կիսում է Անտոնիո Մաչադոյի և Գարսիա Լորկայի հետ: Դիտորես Իբարուրին Մաչադոյին անվանում էր Իսպանիայի մեծ բանաստեղծ՝ ամենամեծը վերջին հարյուրամյակում, ինչպես շեշտում է երենբուրգը:

Սակայն իսպանացիների համար Մաչադոն ոչ միայն բանաստեղծ է, այլև քաղաքական գործիչ: Ֆրանկոյական իշխանությունները բազմիցս ստիպված են եղել արգելել Մաչադոյի՝ բուռն կերպով նշվող հոբելյանները, քանզի դրանք վեր էին ածվում բողոքի ցույցերի՝ ի պաշտպանություն սոցիալական ազատության:

Քիչ նշանակալից չէ նաև Մաչադոյի հետնորդների և աշակերտների վերաբերմունքը: Իգուր չէ, որ Խուան Գոիտիսոլուն՝ Իսպանիայի տաղանդավոր գրողը, վերջացնում է իր վեպը Անտոնիո Մաչադոյի խոսքերով.

“Սակայն ծնվում է այլ Իսպանիա”:

Պեդրո Սալինասի արտահայտությամբ Մաչադոն՝ «ամենաիսպանացին իսպանացի պոետների մեջ», իր բոլոր արձատներով կապված է Իսպանիայի կյանքի, ժողովրդի և գրականության հետ: Եվ ակնհայտ է, որ Մաչադոյի ամենամեծ պարզևն այն է, որ նրան ընդունում և գնահատում են Իսպանիայի բոլոր պոետները: